

պաղարիւն կերպով պատասխանեց, որ յոյս ունի ընկնդիրներ գտնելու և պրաւօսլաւները մէջ: Ես, ի հարկէ, նորան օրհնութիւնս չբռուի:

— Վերոյիշեալ տողերից ընթերցողը տեսնում է, որ Նիկոզայոս սրբազանը զարմացել է ամերիկացու ցանկութեան վրայ և չի տուել նրան իւր օրհնութիւնը Աւետարանի քարոզչութեան համար Տաւրիկեան թերակղզու վրայ, ասելով, որ ընակիչները հազար տարի առաջ են դարձել քրիստոնէութեան: Եթէ նա տեղեկութիւն ունենար, կամ ցանկանար ծանօթանալ մեր երկրում կատարուածների հետ նախ քան խղճի փոքրիկ ազատութիւն տալը, կը տեսնէր, որ իւր ընկերակիցները օրհնութիւն էին տալիս ամեն մի կասկածելի փարաջաւորի քրիստոնէութիւն քարոզելու 1600 տարի առաջ քրիստոնեայ դարձածներին և զանազան կեղծ ու պատիւ խօստումներով պառակտումն և հաւատափոխութիւն մտցնում խեղճ դիւղացի ժողովրդի մէջ, թոյլ չք տալով հարազատ հովիւներին խրատելու և յետ կանգնեցնելու ազահութիւնից ստիպուած կրօնափոխութեան դիմել ցանկացողներին: Բայց ո՞ր լեզուն կարող է պատմել հացկատակների յանուն Աւետարանի կատարած ոճրագործութիւնները . . . :

Նոյն թերթի № 19-ում կարդում ենք. —

«Ապագայ եկեղեցի»

— Այդ ապագայ եկեղեցու մասին խօսում է Մերէթկովսկին իւր աշխատութեան մէջ՝ «Քրիստոս ու Նեոլը», որի վերջին մասը կազմում է «Պետրոս և Ալէքսէյ» անունով առանձին վէպը: Այստեղ հեղինակը փորձում է պարզել ընթերցողի առաջ մեր եկեղեցական կեանքում տեղի ունեցած այն փոփոխութեան միտքն ու նշանակութիւնը, որը տեղի ունեցաւ Ռուսաստանի բարենորոգիչ Պետրոս մեծի ժամանակ: Պետրոս մեծն ու նրա որդի արքայազուն Ալէքսէյ հանդիսանում են երկու հակառակ բեռներ, երկու իրար հակառակ աշխարհների ներկայացուցիչներ: արքայազուն Ալէքսէյ կողմնակից էր Մոսկովեան ուղղափառութեան, որն իւր ներքին կեանքում ազատ է աշխարհային իշխանութեան միջամտութիւնից: Պետրոսն, ընդհակառակն, ամեն կերպ աշխատում էր սխմել այդ կենդանի ոյժը բիւրօկրատիական մեքենայի շուրջ շրջանակում և դուրս վանել ազատ ոգին ար-

տայայտելու ամենայն հնարաւորութիւնը: Այս ուղղութեամբ տեղի են ունենում մի շարք ընդհարումներ: Արքայազուն Ալէքսէյի կողմը կանգնած է ժողովուրդը, իսկ Պետրոս մեծի կողմը մի միայն նրա երկաթի կամբը և մի քանի շրջապատողներ, որոնց համար բոլորովին միևնոյն է, թէ ինչ կրօն կը դաւանեն, միայն թէ թագաւորի հաճութեանն արժանանան: Ժողովուրդը, տեսնելով եկեղեցու հալածանքը, դիմում է հերձուածի և ազանգաւորութեան, իսկ կամակատար հողեօրական դասը ամեն կերպ քաջաւեր է հանդիսանում թագաւորին:

Աշխարհային իշխանութեան հլու և բոլոր պահանջներին խոնարհած պաշտօնական ուղղափառութեան մէջ չընդունելով ճշմարիտ եկեղեցի, չըտեսնելով այն ոչ հերձուածողների ֆանատիքական քարոզութեան մէջ՝ այրուելու և ոչ էլ բարոյապէս այլանդակ ազանգաւորութեան մէջ, հեղինակը փափագում է եկեղեցու ապագայ յարութեան՝ «Յովհաննու եկեղեցու մասին»: Ժամանակակից հետախուզողների ձգտումն դէպի նորանոր շաւիղներ քրիստոնէութեան մէջ դէպի Յովհաննու յայտնութիւնը և դէպի անհասկանալի մարդարէութիւնները, շատ նշանաւոր է: Ինչպէս հեղինակն էլ է նկատում, շատ ընտրու է կրթուած մարդկանց և կատարելապէս աղէտների կրօնական մտքերի նոյնութիւնը, որոնք լարուած ուշադրութեամբ հետևում են եկեղեցու կեանքին վերջին ժամանակում: Բայց եթէ հասարակ ժողովրդի այդ արամադրութիւնը պարզ հասկանալի է նրա կրօնական զգացման արթնանալու պատճառով, երբ մարդն տրամադիր է փութացրած ընդունել երկնային արքայութեան գալուստը և բարւոյ ու ճշմարտութեան յաղթանակը, մեր կրթուած դասակարգի այդ տեսակ արամադրութեան պատճառները բոլորովին այլ են:

Հեղինակը չի ծածկում, որ ինքը ձգտում է և ուզում Յովհաննու եկեղեցու յայտնութեան, որովհետև ներկայումս ճշմարիտ եկեղեցի չի տեսնում: Ընդունենք, որ այդ ճշմարիտ է և որ Պետրոս մեծի մտցրած փոփոխութիւնը վերջնականապէս դրկել է մեր եկեղեցական կեանքն այն պատկերից, որը պէտք է իրի իոկական ուղղափառութիւնը, միթէ դորանով վերջնականապէս սպանուած է ժողովրդի և հոգեւորականութեան մէջ ճշմարիտ քրիստոնէութեան ոգին և չի կարելի այլ ևս վերակենդանացնել: Միթէ բոլորովին ցամաքել է խորհուրդների բարեբար աղբիւրը և ընդհատուել եկեղեցական աւանդութիւնը: Այս խնդրի մասին հեղինակը լռում է. ճշմարիտ ուղղափառութիւն վերկանգնելու մասին չի խօսում, իսկ այդպիսի պակա-

սաւոր կողմը անհասկանալի է դարձնում նրա որոնումներն ապագայի անծանօթ տարածութեան մէջ և Յովհաննու հրաշալի յայտնութեան սպասելը: Ուրեմն Քրիստոսի գործը զուր անցաւ և նրա պակասը աշակերտը պէտք է ուղղէ:

Նախորդ աշխատանքներից, մասամբ էլ առանձին ակնարկներից և վերջին գրքից պարզ է, որ Մերէժկովսկին նոր եկեղեցի է որոնում ոչ թէ նրա համար, որ գոյութիւն ունեցող դաւանութիւններն ու աղանդները դաւաճանել են քրիստոնէական դադարի արդէմ, այլ որ նրա քարոզած կրքի պաշտաման, բարոյական օրինաց ամեն տեսակ չափի բացակայութիւնը, կամ խօսելով տեխնիքական լեզուով, «բարւոյ և չարից այն կողմ կանգնելու» համար ինքը Աւետարանը բովանդակում է ասիէ-տական դայթակղութիւն և ինքը Քրիստոսը ուղղափառ չէ: Ահա թէ որտեղից է այդ նոր յայտնութեանց ծարուր: Նոր գրքի մէջ էլ մենք միայն հին երգի կրկնութեան ենք հանդիպում:

Աշխարհականներից մինքն Ս. Պետրբուրգի թեմական տեղեկարարի մէջ մատնանիչ է լինում ժամակարգութեան ժամանակ կամայական ահադին կրճատումների, այլանդակ և անփոյթ ընթերցանութեան միայն և յոյս է տաժում, որ եկեղեցական ժողովը կըզբաղուի այդ խնդրով և կըմշակի համառօտ ժամակարգութիւն՝ պարտադիր դարձնելով նրա սնթերի կատարումը ապագայում: Միջազրութիւնը միանգամայն համաձայնութեամբ աշխարհականի ծրագրին, իւր ծոնօթութեան մէջ ընդարձակում է այն, առաջարկելով սլաւոններէնից թարգմանել բաղմոսիւ կարգերն ու ազօթքները, որոնցից աղօթողների մի-ծամանութիւնը ոչինչ չի հասկանում: Քահանաներից մինն էլ այդ ծրագրի առթիւ արած նկատողութեան մէջ աւելի հետեւողական պահանջներն է յայտնում:

Մենք դեռ «ձեռքի» ժամանակումն ենք, փոփոխում են կոճակների և շերտերի ձեւն ու գոյնը, բայց այն բանին, ինչ որ հարկաւոր է հոգուն, ձեռք չեն տալիս: Կատիչներ, էստոններ, չեքէմեաներ ժամակարգութիւնը լսում են իրենց մայրենի հառկանակ լեզուով, իսկ ռուս ժողովուրդը դեռ մինչև օրս էլ սպասում է այն երջանիկ ժամին, երբ նրան էլ թոյլ կտան պաշտել իւր Աստուծուն այն մայրենի լեզուով, որը նա ստացել է Աստուածանից: Այս խնդրի մասին ռուսաց մէջ թէև չատ է գրուել, բայց ցայսօր ոչինչ չի արուած այդ ուղղութեամբ: Միջազրութիւնը յոյս ունի, որ այդ խնդրը կը լուծուի եկեղեցական ժողով հրաւիրելուց յետոյ անմիջապէս:

«Կառավարիչ ժողով»

Перк. Вестник-ի № 23-ում վերոյիշեալ վերնադրով արպուած է մի յօդուած, որը մենք նիւթի հետաքրքրութեան պատճառով առաջ ենք բերում քաղաւածարար:

«Ռուսաստանի եկեղեցւոյ կառավարական նոր ծրագրուած ձևի ժամանակ պատրիարքութեան կից գոյութիւն պէտք է ունենայ «Սինօդը»: Ինչ աեղ է գրաւում Սինօդը կառավարութեան այդ ձևի ժամանակ: Պատրիարքը պէտք է լինի Սինօդին կից, թէ՛ Սինօդը պատրիարքին կից:

Կարծում ենք, ոչ մինը, և ոչ էլ միւսը:

Գոյութիւն պէտք է ունենան պատրիարքն ու Սինօդը: 1. Տիկսոմիրովը պատրիարքին կից Սինօդ չի ընդունում, որովհետեւ նրա կարծիքով «կառավարիչ ժողովը» անբեւաւայելի է, որովհետեւ ժողովը միշտ եղել է խորհրդակից և օրէնսդիր և ոչ երբէք գործադիր մարմին: Գործադիր կառավարիչ իշխանութիւնը եկեղեցում ըստ կանոնի իբր թէ պատկանում է եկեղեցու գլխաւոր եպիսկոպոսին:

«Սինօդի աւագագոյն անդամը, այսինքն մայրաքաղաքի միտրապոլիտը,—գրում է նա,—ինքն անձամբ պէտք է ստանայ ըստ իրաւունքները, որոնք այժմ ըստ կառավարչական մասին պատկանում են Սինօդին՝ այսինքն պատրիարքութեան՝ ռուսական եկեղեցու գլխաւոր եպիսկոպոսի իրաւունքները: Սինօդի մնացած կազմը պահպանում է իւր խորհրդակցական ըստ իրաւունքները, որի կանոնաւոր կատարման համար նրա կազմը մեծացնում է թեմերից հրաւիրուող եպիսկոպոսներով, ուսումնական վարդապետներով և փորձուած աւագ քահանաներով և այլն»:

Կարծում ենք, որ վերոյիշեալ մեկնութիւնը ըստ կանոնականի շատ էլ ճիշտ չէ, կամ ըստընդունուող չէ:

Մենք կարծում ենք, որ պատրիարքն առանց Սինօդի կամ խորհրդակցական Սինօդով միանգամայն հակահանդիման կլինէր: Բոլոր եպիսկոպոսները հաւատար են և նման: Այն եպիսկոպոսը, որ կը կառավարի ոչ ուրիշներին հետ միևնոյն շարքում, այլ կանոնաւոր կլինի ըստ իր գլխին, նա ուղղափառ եպիսկոպոս չէ:

Տիկսոմիրովի ծրագրում պապականութեան յայտնի հովեր կան, իսկ պապականութիւնից Աստուած ազատի մեղ:

«Առաջնութեան կանոնական սկզբունքը պրաւօսլաւ եկեղեցում՝ իւր էութեամբ ոչ մի նմանութիւն չի ունեցել հռոմէական պապականութեան հետ, այդ շատ լաւ գիտէ տիեզե-

րական կանոնական օրէնսդրութեան և յունական, ռուսական և սլաւօնական եկեղեցիները հետ փոքր ի շատէ՝ ծանօթ իւրաքանչիւր անձը:

Բաւական է միայն ուշադրութեամբ կարդալ առաքելական 34-դ. կանոնը, որը ձեւակերպում է առաջնութեան խնդիրը, որպէս զի համոզուենք, որ այստեղ միջնադարեան պապական միապետութիւն յիշեցնող բան չկայ բոլորովին: Յունական եկեղեցու ոգու և կանոնների տառացի նշանակութեան համաձայն աւագագոյն եպիսկոպոսը ինչ վարչական բարձր պատուով էլ տարբերուի միւսներից՝ իւր առտիճանով ոչ մի առաւելութիւն չունի միւսներից. նա նոյնպիսի խոնարհ եպիսկոպոս է: Ընչպէս որ բոլոր միւսները: Նա ինքը ձեռնադրւում և դատւում է եպիսկոպոսների ժողովի կողմից այնպէս, ինչպէս նրանցից իւրաքանչիւրը: Առանց նրանց հետ խորհրդակցելու նա էլ արտաքոյ իւր թեմի ոչինչ չի անում, ինչպէս չեն անում և միւս եպիսկոպոսները:

Առաժկցս պարզ է, որ Տիւսօմիրովի միապետականութիւնը կաթոլիկութեամբ գրաւուելու արդիւնք է. եկեղեցու միակ օրինաւոր կառավարիչ մարմինը կարող է լինել մի միայն ժողով:

Կառավարելու այդ ձևն է եկեղեցական կազմակերպութեան առաջին քայլը, գլխաւոր հիմքը և հիմնական այդ ու բէնը: Տիւսօմիրովի առաջին նայելով՝ ժողովի անդամները մի միայն խորհրդակցում էին և օրինադրում: Ընդհակառակն նրանք և կառավարում էին և «չինարարում»: Զին եկեղեցում տեղական ժողովներում միանում էին խկապէս երկու հիմնարկութիւններ՝ եպիսկոպոսների համաժողովը, որը հաւաքւում էր նոյն նպատակներով (փոքր թուով), ինչի համար որ կարող էր ժողովուել տիեզերականը, այն է՝ խորհելու բարեպաշտական դաւանաբանութեան և լուծելու եկեղեցական տարաձայնութիւնները. (առաք. օրէնք յօդ. 37) և վարչական դատաւարական ժողով, որը քննում և հեղինակաւոր կերպով վճռում էր տեղական վարչական—դատաւարական գործերը. (5-դ. Նիկ. ժողով):

Տեղական ինն ժողովները աուին իրենց օրէնսդրական կանոնները, իսկ ի՞նչ էին անում մնացածները: Նրանք վճռում էին եկեղեցու գործերը ոչ թէ սկզբունքով, ոչ թէ տալիս էին օրէնսդրական կանոններ, այլ միայն ընթացիկ գործերի վճիռներ էին տալիս: Այդպիսի ժողովների նիստերին էին յանձնում եպիսկոպոսներն իրենց այն բոլոր գործերը, որպիսիք վճռելիս եկեղեցու օգտի և բարեշինութեան համար հարկաւոր էր կատարեալ համաձայնութիւն, այն բոլոր գործերը որոնց մէջ շփուում էին մե-

քանի թեմերի շահերը և որ եպիսկոպոսը համարում էր իւր իրաւասութիւնից վեր, (առաք. կան. 37): ժողովն ինքն իւր վրայ էր վերցնում եպիսկոպոսների բոլոր դատական և քննական գործերը, վերաքննական բոլոր բազմներն ու դատավարութիւնը: Օրէնքով պահանջւում էր, որ այգետեղակ ժողովներ հրաւիրուին տարեկան երկու անգամ. բայց տարեկան երկու անգամ հրաւիրուած ժողովները կարող էին բաւական լինել մի միայն հին եկեղեցական շրջանի համար, որը բաղկացած էր լինում մի քանի թեմերից, որոնց ժողովրդի թիւը հազիւ հաւասար էր ներկայ մի թեմի ժողովրդին: Իսկ այժմն երեւելիացեալ համեմատութեամբ աւելի ընդարձակ մի շրջան, օրինակ պատրիարքականը: Այստեղ, եթէ անգամ ի նկատի առնենք, որ տեղի է ունեցած ապակեզրոնացումն եպիսկոպոսական իշխանութեան, այնուամենայնիւ այնքան շատ գործ կլինէր թեմականներից դուրս, որ տարեկան երկու անգամ ժողով գումարելով ոչ ինչ էլ շինուիլ և հարկաւոր կլինէր հրաւիրել այդ ժողովը ոչ թէ երկու, այլ քսան և երկու անգամ, ուրիշ խօսքով այդ ժողովը պէտք է դառնար մշտական: Ահա այս տեղից է առաջ եկել Պօլոսոյ պատրիարքի մշտական ժողովը, որը դպրութիւնն ունի V-դ դարուց:

Այդ ժողովների գործերը ցոյց են տալիս, որ այդ ժողովները ոչ թէ խորհրդակցական մարմին էին պատրիարքի մօտ, այլ պատրիարքի բարձրագոյն վարիչ և դատատանական հիմնարկութիւն:

Ահա այդ պատճառով էլ կառավարիչ ժողովը հնարաւոր է: Միայն հարկաւոր է, որ նա ներկայ Աինօղի նման հալլեղիւս չը լինի: Փոխիսութեան գործը դժուարին չէ: Կողէգիւան ժողովի փոխելը դիւրին է և կարելի է առանց դժուարութեան իրագործել՝ մի միայն ուղղելով երկու բան, որոնց անհրաժեշտութիւնը ռուսական եկեղեցում միշտ զգալի է եղել. բոլոր եպիսկոպոսները համարուած են Աինօղի անգամ և բոլորն էլ հերթով հրաւիրուած են այնտեղ տարեկան մինչև 12 հոգի:

Իւրաքանչիւր առանձին եպիսկոպոս իւր թեմի ուսմաններում կառավարում է սրտշատարիճանի նախաձեռնութեամբ: Բոլոր եպիսկոպոսները Աինօղ կազմելով, վարում են ընդհանուր եկեղեցական այն գործերը, որոնք եպիսկոպոսի իրաւասութեան շրջանից դուրս են, ընթացք են տալիս թեմական այնպիսի գործերին, որոնց քննութեան գործում եպիսկոպոսը այս կամ այն պատճառով պարտաւոր է անմասն լինել՝ չըմանակցել, կամ կարիք ունի եղբարց ձայնի և համաձայնութեան:

Այդպիսի փոխիսութեան միջոցին եկեղեցին կրկառավարեն

«եկեղեցուց ընտրեալները», որոնց եկեղեցու բոլոր եպիսկոպոսները հաւատապել են իրենց թեմերի որոշ գործերում իրագործել իրենց եպիսկոպոսական իշխանութիւնը: Ամբողջ եպիսկոպոսական եկեղեցին այստեղ ներկայ է, թէ և բացակայողը միայն լուռ համաձայնում է իւր ընտրեալներին հետ՝ այնուամենայնիւ իրեն է վերապահում վերստուգութեան և սրբադրութեան իրաւունքը տեղական թեմական ժողովում: Անդամներին հրաւիրելու և կառավարութեան այդ ձևը Սինոդը դարձնում է ոչ թէ եպիսկոպոսների խորթ կալէքիա, այլ եկեղեցու մարմին, նրա կեանքը ստեղծագործող և ուղղութիւն տուող, այսինքն կառավարիչ գործադիր մարմին:

Իսկ անդամների մեծացրած թիւը և նոր կանոնաւորութեան կադմակերպութիւնը այդ կառավարիչ մարմնին կը տայ ոչ թէ — կեղծ կառավարութեան իշխանութեան ստուերը միայն, այլ իսկական իշխանութիւն և ազատելով սեղանապետ չինովնիկական հիմնարկութիւն լինելուց, կը դարձնի իսկական կառավարիչ մարմին:

Այժմեան Սինոդի գլխաւոր ցուերից մէկը գործերի շատութիւնն է: Ապակեգործնացման բացակայութեան շնորհիւ Սինոդ են մտնում ամեն տեսակ գործեր՝ սկսած օրինատահման ժամանակից առաջ և չընտանական ամուսնութեան թոյլատուութեան խնդիրներից, որոնք գործնականապէս թոյլատուութեան չեն: Եթէ ի նկատի առնենք, որ վիճակագրական տեղեկութիւնների համաձայն կոնսիստորիաներն արձակում են տարեկան 20,000 գրութիւն, Սինոդը պէտք է արձակի 7 անգամ եօթանասուն և եօթը բազմապատկած 20,000-ով: Շատ պարզ է, որ Սինոդը չի կարող վճուել, այլ միայն պէտք է ստորագրի այդ խնդիրների վերաբերութեամբ մասերի քարտուղարների տուած վճիռները:

Նոյն իսկ նշանաւոր եկեղեցական կամ դատաստանական խնդիրներնում, նա՝ հակառակ եկեղեցական շահերի և Աստուծոյ և մարդկանց օրինաց ընդդէմ, պէտք է հաւատք ընծայի պաշտօնեաների ճաշակին ու հայեացքին: Այժմեան Սինոդը բնեցիկ Ազատեցողութիւնի 1864 թուի ծրագրի համաձայն բաղկացած է 16 եպիսկոպոսներից: Նրանցից 4—6 մշտական են, իսկ մնացածները տարեցտարի փոփոխուում են: Սինոդը բաժանուում է մասերի, որոնք կարող են հինգ լինել. — օր. 1) դատաստանական բաժանմունք. 2) դպրոցական և տնտեսական գործերի. 3) հոգևորականների վիճակի վրայ հսկող. 4) ընտանեկան, ամուսնական և ամուսնալուծական խնդիրներ վճռող. 5) միացեալ խորհուրդ այն կարևորագոյն գործերի համար, որոնք բաժանմունքներում

տարբեր կերպով են մճռուել, և ընդհանուր եկեղեցական կեսներին ուղղութիւն տալու:

Այդպիսի բաժանմանց հետ եթէ գոյութիւն ունենայ և ապակեղերոնացումն, և որոշ գործեր Սինօգից հանուելով՝ յանձուեն թեմական ժողովներին և առաջնորդներին, այդ դէպքում Սինօգը կը դառնայ կառավարելու ընդունակ և հետեապէս կը ճանաչի ու կը հասկանայ եկեղեցու իսկական կեսները և ոչ թէ միայն պատրաստի արձանագորութիւններ կը ստորագրի:

Ի՞նչ կանի պատրիարքն այսպիսի Սինօգում:

Նա կը նախագահի և կը ղեկավարի Սինօգի ժողովները:

Նա կը գեղուցանի Սինօգի մճիւռները Կայսեր: Նրա իրաւունքն է հայրաքար առաջնորդել եղբարց՝ բայց առանց նոյն իսկ հայրական իշխանութեան: Եթէ այդ քիչ է, նա կարող է ունենալ գործունէութեան առանձին եղանակ: Ժողովի լիազօրութեամբ նա ունի և որոշ կարգադրութիւններ անելու իրաւունք, երբ այդ անցեաածդելի կերպով պահանջում է:

Նա իւր կողմից կարող է հրատարակել հովուական շրջաբերականներ, կոնդակներ, և անհրաժեշտ դատուած դէպքում նոյն իսկ Սինօգից անկախ կտրուկ միջոցների դիմել: Նա կարող է դատաստան նշանակել եպիսկոպոսների վրայ և այլն և այլն:

Ի հարկէ այդ իրաւունքները ոչ մի վտանգ չեն սպառնում և պատրիարքի իրաւունքները չեն ընդարձակում, ուրեմն չեն ստեղծիլ «բարձրութիւն և մեծամտութիւն», որից վախում էր 1581-ի ժողովը:

Այո՛, այդ հանգամանքը չի կարող վտանգ սպառնալ, որովհետեւ թէ պատրիարքը և թէ Սինօգը պատասխանատու են եպիսկոպոսների ընդհանուր ժողովի առաջ: Տեղական ժողովը, որ հաւաքւում է 2 տարէն մի անգամ, «դատաւոր է» պատրիարքի և կառավարիչ ժողովի երկու տարուայ գործունէութեան:

Արդեօք նոր Սինօգը տեղական ժողովներով ուժեղ կլինի՞. Ի հարկէ, այո՛, որպէս ընդհանուր եկեղեցական իշխանութիւն: Նրա հրամանները արտայայտութիւն կլինին բարձրագոյն հեղինակութեան, իսկ տեղական ժողովը ոչ թէ կը թուլացնի, այլ կը զօրացնի Սինօգը, որովհետեւ նա կը վարի մի միայն կարեւորագոյն խնդիրներ՝ որպէս «օրէնսդիր» ժողով և մի միայն վիճելի գործեր, որպէս բարձրագոյն դատաստանական մարմին:

— Սոյն յօդուածը մենք քաղուածօրէն առաջ բերինք խորհրդածութեան նիւթ դարձնելու և մեր եկեղեցունման կարիքները:

Նոյն թերթում կարգում ենք:—

Զախաղանց դժուարացաւ պրաւօսլաւ աղգարնակութեան և հոգևորականութեան գործիւնը մեր երկրի արեւմտեան ոահմանակից մասում բոլոր ուսու հպատակներին դաւանութեան և աստուածապաշտութեան ազատութիւն տալուց յետոյ: Այն քանում, ինչ ոչ այժմ տեղի ունի Պրիւիլեյան երկրում, այն է նախկին ռենիթուներ խմբակցական վերադարձը կաթոլիկութեան, անկասկած որոշ չափով մեղաւոր է և տեղական պրաւօսլաւ հոգևորականները, որը միշտ և ամեն տեղ ճշմարիտ հովիւ չէր հանդիսանում: Այդ մասին այժմ գրում են նաև տեղական զիւղացիք: Հանգամանքները հոգևորականներին հրաւիրում են եռանդուն հովուական և կրթական գործունէութեան: Այդ գործունէութեան միջոցին, ինչպէս այդ բանի վրայ մատնանիշ եղաւ Խօլմի և Վարչաւայի արքեպիսկոպոս Իէրոնիմը, պէտք է ունենայ միայն մի զէնք «քրիստոնէական սիրոյ» խօսքն ու քրիստոնէական համոզմունքը:

Այնուհետեւ թերթը բերում է մի երկու օրինակ, արեւմտեան մասում գործունէութիւնից, որով նրանք աշխատում են տարածել կրօնական ուսումն ու գիտութիւնը նման բովանդակութիւն ունեցող թռուցիկ թերթերով:

—Մենք կարծում ենք, որ համոզմունքով կրօնափոխ եղողը, երբէք չի փախչիլ ընդունած կրօնից և այն էլ խմբովին: Այստեղ անշուշտ կատարուած է պոլիցիական հոգևորականի այն սովորական սխալը, որ քաջ ծանօթ է Կովկասում.—խոստումներով և հազար ու մի միջին միջոցներով կրօնափոխ դարձնել ժողովրդի տականքներին, որտեղ համոզմունքի մասին խօսք չինել չի կարող և ընտանեացիները նիւթական յուսախաբութիւնից յետոյ, երբ վերանում է գոյութիւն ունեցող ճշումը, մարդիկ աշխատում են հաշտուել վրդովուած խղճի հետ և դառնալ դարերի ընթացքում իրենց մայրենի եղած եկեղեցու ծոցը:

Վերջին ժամանակներս Ռուսաստանի ներքին կեանքում անցած դարձած դէպքերի չեղոք հանդիսատես չէ և հոգևորականութիւնը: Մինչդեռ մի կողմից մայրաքաղաքի զարգացած հոգևորականութիւնը դժգոհ է ոչ թէ բիւրօկրատական ներկայ գրութիւնից, այլ և եկեղեցական վարչական կազմակերպութիւնից, միւս մասը արթուն պաշտպան և պահապան հանդիսանալով եղած վարչական ձևին, ամեն տեսակ միջոցներով կռւում է յառաջադէմ կուսակցութեան դէմ:

«Сынъ Отечества» թերթի քրոնիկոնի բաժնում գրուած էր հետեւալը.—

«Այրիւի 3-ին Պետերբուրգի 3-դ գիմնազիայի դպրոցական եկեղեցում տեղի ունէր հանդիսաւոր պատահագ: Յղօթողների մեծ մասը բաղկացած էր հասարակ ժողովուրդից և փոքրաթիւ գիմնազիստներից և ուսանողներից: Պատարագի վերջում ծիտամիրի և Վալենի եպիսկոպոս Անտօնիսը քարոզ խօսեց: Ճարտասանը գոհունակութիւն յայտնեց, որ աղօթողների մէջ տեսնում է աշակերտներին և մանաւանդ ուսանողներին, որոնց մասին գոյութիւն ունի այն համոզմունքը, որ նրանք եկեղեցի չեն յաճախում: Այնուհետեւ նա պնդեց իրենքին զգուշացնում էր ինտէլիգենցիայից, մանաւանդ բժիշկներից, իրաւաբաններից և ուսանողներից: Եպիսկոպոսը յիշեցրեց, «որ սի ուղում է առաջին լինել, պէտք է բոլորին ծառայ լինի» և խորհուրդ էր տալիս «իրաւունքներով» չը յափշտակուի: Նրա կարծիքով ինտէլիգենցիան չինտիմիներից լաւ չէ: Իւր այդ խօսքին որպէս անպատշաճ նա մատնանիչ եղաւ այն բանի վրայ, որ դրադէտները սկսան մշակել գաղթականական հարցը, բայց ոչինչ դուրս չեկաւ, որովհետեւ նրանց չէին վարձատրում ոչ շքանշաններով և ոչ էլ աստիճաններով: Ռուսաստանում արեւմտեան Եւրոպայի ձեռով կառավարութիւն մտցնելը, շարունակեց սրբազանը, բոլորովին ցանկալի չէ, որովհետեւ արեւմուտքում ամենքը համակուած են հին գերմանական բարբարոսութեամբ և հռովմէական հպարտութեամբ:»

Եթէ անգամ մի կողմ թողնենք գերմանական բարբարոսութիւնն ու հռովմէական հպարտութիւնը, այնու ամենայնիւ սրբազանի ճառի մէջ դեռ բուականաշափ բիւրօկրատական հպարտութիւն կը մնայ: Նոյն բոպէին գովել ներկայ եղող ուսանողներին, բայց և այնպէս ժողովրդին հրաւիրել զգուշանալ ուսանողներից, վախենալ և չը հաւատալ նրանց, կարծում ենք, որ շատ մեծ հակասութիւն է և դէմ է թէ քրիստոնէական ոգուն և թէ այն խոնարհութեան, որով զինուած պէտք է լինի իւրաքանչիւր հովիւը:

Մայիսի 31-ին պատահած դէպքերի պատճառով, ինչպէս անցեալ անգամ հաղորդել էինք, Քարթալինիայի և Կախէթի գործակալ քահանաները որոշեցին գործակալութիւն չանել, մինչև իրենց արդարացի պահանջներին բաւարարութիւն տալը: Այժմս լրագիրները հաղորդում են, որ նոքա վերջնականապէս վճռել են հրաժարուել գործակալութիւնից:

Ինչպէս յայտնի է Վրաստանի նախկին էքզարխ Ալէքսէյի կարգադրութեամբ Բաքուի նահանգի և Աղէքսանդրապոլի գաւառի համար հաստատուել էր առանձին եպիսկոպոսական աթոռ, որի համար պէտք է ձեռնադրուէր Թիֆլիզի հոգևոր սեմենարիայի տեսուչ վարդապետ Նիկանդրը: Վերջինիս՝ մայիսի 31 ին սեմինարիայում և նրա առաջ պատահած դէպքերի պատճառով կանչեցին պետերբուրգ և ուրիշ տեղ լիոնարքեպիսկոպոսական լրագրիչները հազարգում են, որ մտադրութիւն կայ ոչնչացնելու Բաքուի և Ալէքսանդրապոլի պրաւօսլաւ եպիսկոպոսական աթոռը:

ՊՐԱՅՈՍԼԱՆ ԵԿԵՂԵՅԻ ՎՐԱՅ

Զուգրիդի եւ Սեմակի գաւառների հոգեւորականների
համաժողովը.

Յուլիսի 12-ին Մինդրէլիայի շրջանի գործակալներն ու հոգևորականութեան պատգամաւորները Իմերէթիայի Լէօնիդ եպիսկոպոսի թոյլտուութեամբ հաւաքուած էին Նոյօ-Սենակի քննելու ներկայ եկեղեցական կեանքի և Մինդրէլիայի հոգևոր և եկեղեցական դպրոցների վերաբերեալ խնդիրներ: Համաժողովի նախագահ ընտրուեց միաձայն գործակալ Կ. Գացերէլին: Համաժողովը վճռեց՝ Վրաստանի ուրիշ մասերի հետ միջնորդութիւն յարուցանել ռուսաց կառավարութեան առաջ, որ Վրաստանի եկեղեցու կառավարութեան ներկայ ձեռ լիոնի ուրիշ եկեղեցական—կանոնական կեանքին համապատասխան ձևով, ինչպէս որ կըվճռի հոգևորականութեան մեծամասնութիւնը և նրանց ընտրած և ընդունած կառավարութեան ձեռ հրատարակել լուր և ի գործադրութիւն ամբողջ ժողովրդի: 2) Միջնորդել, որ Վրաստանում ներկայ հոգևոր դպրոցների լիոնարէն բացուին ժամանակի ոգուն և մանկավարժական պահանջներին համապատասխան զուտ ազգային դպրոցներ: 3) Ազատել հոգևորականութիւնը ծխականներից նիւթականապէս կախուած լինելուց և ապահովել նրանց գանձարանից տրուող որոշ ռոճկով: 4) Թոյլատրել, որ ամբողջ կաղմով, կամ ընտրուած պատգամաւորներով իրենք իրաւունք ունենան մասնակցելու վրաց եկեղեցու ամբողջ հոգևորականութեան շահերը պաշտպանելու այն համաժողովներում, որոնք կարող են տեղի ունենալ Քութայիսում, Թիֆլիզում, Մոսկւայում, Պետերբուրգում և այլ քաղաքներում և ազատօրէն ձայն տալու թեր և դէմ: 5) միջնորդութիւն